ՀՀ Լոռու մարզպետարան
Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանին

Լուսինե Սարսգսյանից

/Հայաստանի Հանրային ռադիո, Լոռու մարզի թղթակից

ք. Վանաձոր, Տարոն 1, 5/7

lusatu@yandex.ru

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Խաչատրյան

2022 թվականի փետրվարի1-ի Ձեր ասուլիսի ժամանակ Դուք անդրադարձել եք 2021 թվականի սեպտեմբեր ամսին Վանաձորի համայնքապետարանում իրականացված ստուգումներին, որոնց արդյունքում բազմաթիվ ապօրինություններ ու խախտումներ եք հայտնաբերել:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ այդ ստուգումների արդյունքների մասին՝

1. Ո՞ր ժամանակահատվածին են վերաբերվում այդ ստուգումները
2. Ո՞ր ոլորտներում են արձանագրվել Ձեր մատնանշած խախտումները և ի՞նչ բնույթի են
3. Արդյո՞ք արձանագրված խախտումների հիման վրա կան հարուցված քրեական գործեր իրավապահ մարմինների կողմից և ի՞նչ փուլում են
4. Վանաձորի համայնքապետարանի ո՞ր պաշտոնյաներին են առնչվում վերոհիշյալ խախտումները

Միաժամանակ խնդրում եմ տրամադրել վերոհիշյալ ստուգումների արդյունքները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ՝

Լուսինե Սարգսյան 02/06/2022 թվական